

— Օրհնութեան յանուն Զաքար Աղայի
Զամբուլատեան ի Կաղզուան. թ. 510:

— Յանուն Տ. Եփրեմ վարդապետի ու
րով շնորհի նմա լանջախաչ վարդապետական
տկանակուռ. թ. 533:

— Յանուն Սինոդի ս. Էջմիածնի ուրով
յայտնի կարգումն Տ. Եփրեմ վարդապետի
ի պաշտօն առժամանակեայ անդամութեան
վիճ. կոնսիստորիային Հայոց Բիշնէի: թ. 534.

— Յանուն Տ. Տաճատ քահանայի Մա-
րադեան Շամախույ, ուրով շնորհի նմա կամի-
լաւկայ: թ. 538:

— Օրհնութիւն յանուն պ. Դէորդայ
Եւանդուլիան. թ. 548:

— Հաստատութեան Հոգաբարձութեան
դպրոցին Հայոց Մեկիտոպօլի: թ. 589.

— Յանուն Գեր. Տ. Գէորգ Արքեպիս-
կոպոսի զինգրոյ Յովնանիան—Մարիամեան
դպրոցին Հայոց Տփղեաց: թ. 602.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. Կրօնի կենսատու զօրութիւնը . . . Գ. Ս. . . 244
2. Եկեղեցին եւ աղքատների խնամատարու-
թեան գործը . . . Գ. Ս. . . 245
3. Տիմոթէոս Լուրդոսի նորագիւտ երկը եւ
նորա մի քանի նոր հատուածները նախնի
հայրերից առած . . . Գ. Վ. . . 251
4. ԵԿԵՂԵՑԱՆ ԶՐՈՆԿՈՆ 258

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Հ. Գեղեցի, Համառօտութիւն Քիւզանդական
կայսրների պատմութեան. . . Մ. Վ. . . 262

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

6. Երեւակայութիւնը կրթութեան գործում. Մ. Յ. . . 264
7. Խօսք եւ համբերի օրինակելի զպրոց Զուի-
ցերիայում 266
8. ՄԱՆՐԱՆՈՒԹ 268

ԱԶԳԱՅԻՆ.

9. Լուսաւորի կոչը . . . Գ. Ս. . . 269
10. ԵԿԵՂԵՑԻ ՎՅԱՍՏԱՆԵԱՅՑ 270
- ՄԱՅՐ ԱՅՈՒՌ 272
- ՏԱՃԿԱՅՑ 274

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ. 274

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

- ՅԱՆԵԼՈՒԹ. Թուղթ Ան. Մոկ. Գ. Տ. Մկրտչեան. 275
- ՄԱՅՆԱՆՈՍՈՒԹԻՒՆ.
- ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.



ՅԱՆՆԻՍԻՍ ԵՐԱՐԵՑԻ 1897 թ. ՅՈՒՆԻՍ

Բ.

ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՊԱՏՏԱՌ. ՅԱՂԱԳՍ ԶԵՆՈՐՈՎ. ՆԶՈՎԵԼՈՅՆ

ՁԱՆԶԵԻԱՅԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆ *



Բարրաք տտուածային պատգամացն
աստանօր զարթուցանէ զմեզ այժմ¹ առ վարկ
ակամայ² հարկապահանջութեանս, որ յա-
ւուրս մեր: Բանդի ասի ուրեմն կանխագոյն,
թէ Լուարօք զայս ամենայն ազգք³ երկրի,⁴
և զնովմբ ածեալ ասէ, թէ ծերք լուարօք
և պատմեցիք որդւոց⁵ ձերոց, թէ երբեք
եղեալ իցէ այս յաւուրս ձեր, զոր այժմ թե-
լադրեաց չարն սկզբնախար սատանայ սաղիր
սողոսկանօք ի սողոմածոց⁶ և ի մահաշունչ⁷
լեզուս ուղ[ղ]ոց, զոր անդանօր [գ]երբնա-
կան⁸ ձայնն ի վաղնջոյն նախագոյն մեր. ԹՄ.
ամաւ զուշակեաց Հոգին սուրբ ի բերանոյ աս-
տուածախօսն Պօղոսի որ [Բ 131a] գերա-
պարծիկ գոյր լինել հազարապետ⁹ խորհրդոցն
աստուծոյ, ասելով՝ թէ Միթէ փորձ ինչ խնդ-
րէք զԲրիտանիայ, որ ինչս¹⁰ ընդ ձեզ խօսի,¹¹
Որ արդարեւ ոչ փորձ, այլ ճմարտութիւն
բաւանդակն,¹² քանզի լցեալ կատարեցաւ ա-
մենայն հոգիարուխ վարդապետութիւնք նորա,
է որ [ի] վաղնջոյն իսկ անդ ուրեմն, և է որ

* Տէս Երարատ փետր. և մարտ.

1. Ա այժ
2. Բ ակամա
3. Ա ազգ
4. Ա Սաղմոս ԽԼ, 2.
5. Բ որդոց
6. ԱԲ այսպէ՛ս.
7. Ա եւ ինմ մհշմշ
8. Ա երբ քննի Բ երբ բանական
9. Ա ոպես Բ ոպետ. տե՛ս Առ. Կորնթ. դ. 1
„եւ հազարապետս խորհրդոցն աստուծոյ.“
10. Ա ինչ
11. Ա Կորնթ. երկ. ԺԳ, 5.
12. Ա քովանդակն

յաւուրս մերոյ ժամանակիս. ի դէպ մեզ պատկանեալ թէ ի ժամանակս յետինս քակտեցին¹ ոմանք ի հաւատոց և հայեցին ի մուրուքիւն զիւական² և ի ձէնջ յարիցեն, որ խօսին սուտ³ ձգել զաշակերտսն զկնի ստայօք բանաստեղծութեանց: Որք ոչ գաղաւեն կեղեքել զուղիղ աստուածակարգ բան վարդապետութեան, անդլակի⁴ վարժմամբ ներակրթեալք ի զիւտ⁵ բանաստեղծն հակարաշից⁶ ճշմարտութեան: Որք համակ հակառակք և միշտ անիրաւք, որդիք անհնազանդք, ապիրաւք և ապերախտք, ապարանեալք⁷ ընդդէմ հօրն հաւատոյ և թիկունս դարձուցին ընդդէմ աստուածային պայմանին:

Ի մէջ ելեալք, [Ա 207b] այլ ոչ ի մէջ⁸ զի թէպէտ և մարմնով մերակերպ գունեալք,⁹ առ բարւոյն¹⁰ բուսեալ և ընդ նովաւ աճեցեալ, այլ զոյիւ խառնեալ ի խորհուրդ չարին և զնորին զիեալ զմահադեղ զկաթն, որ ոչ զքիմն պարարէ, այլ զհոգին պարուրէ, որ ոչ ռետին քաղցրաճաշակ, այլ չարախտաւատ և ապաժոյժ լիղի և լի թիւնիւք մահու որոմնացան¹¹ վիշապին:

Ձի զոր օրինակ ի վաղնջոյանն [Բ] առ կալարողործն գողտրախար երկրացիկ պատուհանսն զմրեթարթին լսարանաց դաւանեալ զեն,¹² նենգ խորամանկութեամբ զաստուածանալոյն կարծեցոյց¹³ ճաճանչ փաղաքշական բաներգութեամբ. որ և զնախունակն ետ կորուսանել և հեռանալ ի զրկաց աստուածատնունդ կայենից, նոյն խորամանկութիւն չարին և այժմ ընդմտեալ յորդիսն ապստամբութեան՝ ի ժամանակս մեր ետ բարբառել բանս անգովակս, և զնեղ տարացոյցս աննմանս, և խօսել զոր ոչ է արժան:

Քանզի [Ի] ՆԴ. Թուականիս և ի չորեքտասան¹⁴ ամի մերոյ զիաւաւորութեանս

յարեաւ ոմն յեպիսկոպոսոց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր մեր նմա զփիճակն Անձեացեացն, այր համեստ և զիանաւոր և ալեօք ծերութեամբ զարգացեալ, յանկարծակի իրրեւ ի դիւական հոգւոյն շարժեալ, առանց իրիք հակառակութեան սկսաւ նախ զբարբառն զերակի արձակել՝ բոտ յունարէն լեզուոյն զկիրակէն կիւրիակէ կոչել և զերուստղէմ Եռուսաղէմ և որ սոցին նման է, ի սոյն յառեալ* բարբառ: Իսկ զկնի այսորիկ ապա այլ յառաջեաց բաժաղմունս անհեղեղս. Քանզի հրամայէր մինչև¹ մօրուսն² եկեալ՝ զգրլուխ խուզել մանկանց, թէ Այսր աղագաւ կոչի կտրիլ,³ և զկնի մօրուացն զհերսն ապա թողուլ, երկայնիլ և մանիլ ցորունսն,⁴ զի Այսր աղագաւ կոչին մանուկ.⁵ Եւ այս երկարեալ առ անգամ մի, ապա և յեկեղեցի եմոյժ զբաժաղմունն իւրոյ զգայօսն: [Բ 131b] Քանզի յաղագս քրիստոսեան խաչին այսպէս ասէր, թէ Այն խաչն, որ քահանայքն աւրհնեն և այլ՝ [Ա] զոր ոչ աւրհնեն—միապատիւ է, և աւելորդ զաւրհնելն վարկանիմ: Եւ յայսոսակն ներեալ մեր նմա: Ապա սկսաւ այլ իմն նոր հերձուած աւանդել մուծանել յեկեղեցի աստուծոյ: Քանզի ասէր. Մի պատիւ և մի փառք հրեշտակաց և հրեշտակապետաց, բոտ նմին՝ մի փառք և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին, տարացոյց տալով թէ Դրեալ է՝ կոչեն զայս ոք ի զպրութենէ, յաշտիճան սարկաւաղութեան և զայն ոք կոչեն ի սարկաւաղութենէ յաշտիճան քահանայութեան, ահաւասակ դեռ ի վերանալ է աշտիճանօք,⁶ Եւ զի այս ոք, ասէ, կոչեն ի քահանայութենէ յաթոռ եպիսկոպոսութեան, չիք աշտիճան այլ, ահա զերազրեցաւ յաթոռ: Եւ զայն ոք կոչեն յեպիսկոպոսութենէ յաթոռ հայրապետութեան, և չիք այլ անուանց յորջորջումն, մի աթոռ է և մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին: Եւ զերկրորդ⁷ կոչումն լուծումն ասէր և ոչ կրկին պատիւ հայրապետութեանն:

1. Բ քակտեցին

2. Ա ՏԻՄ. Ա. Գ. 1.

Բ ի մուրուքիւն զիւական մուրուքիւն

3. Ա Գործ. Ի. 50.

4. ԱՅ անդ լակի 5. ԱՅ ի գիւթ

6. Ա հակահրաշից 7. Բ ապարանեալ

8. Ա Յովհ. Առաջ. Բ. 19.

9. Բ գունեալ 10. Բ առ բարոյն

11. Ա Մատթ. ԺԳ. 25.

12. Բ դաւանեալ է՝ են Բ դաւանեալ են ?.

13. Ա Եւնդ. Գ. 5. 14. ԱՅ ի զժան

1. ԱՅ մշու

2. Բ մօրուս

3. Բ կտրիլ

4. Ա մանից ցորունսն Բ մանիլ ցորունսն

5. Ա չուչի „մանուկ“

6. ԱՅ յաշտիճանօք

7. ԱՅ զք՝ ո

* = յարեալ ?

Եւ առաւել քան զսոյն ի նոյն միտ
յաւելլ զոր աղաչեալ մեր բազում անգամ
դառնալ նմա [յ]այնմ անուղղայ ¹ և մտա-
խար խորհրդոյ զոր թէ և արտասուօք իսկ
խնդրեցաք սակայն ոչ կամեցաւ ուղղիլ Ձոր
հարկեալ ի հրամանէ աստուծոյ կտրել հրե-
ղէն սրովն և զբաժինն ընդ կեղծաւորսն դնել ²
որ և զնոյն թօշակ տարաւ առ հանդերձեալսն
պաշար կորստեանս զի ոչ զղացաւ մինչև ի
վերջին շունչն Վասնորոյ հարկեցաք զբել զայս
մնացական կտակ առ յապա [Բ] կկելոցն զի
զգուշացին յայնպիսի ընդվայրայած քննու-
թեանց և ուղղութեամբ նկատեսցեն զաւե-
լտի առ հանդերձեալ կեանսն զի Ծառ է ա-
ւուրն չար իւր ³



Գ.

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՅԱՂԱՅՍ ՈՐ ԱՍԵՆ, ԹԷ

ՄԻ ՊԱՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՒ ՎԱՍՆ ՄԻ ԼԻՆԵԼՈՑ ԿՈՉՄԱՆՆ

Արդ քանզի բուսան բաղայք խորհրդոյ
նանրութեան ի տանս Թորգոմայ յոմանս կա-
րապետ ապստամբութեանն յառաքելոց ասա-
ցեալ նախընկալ ¹ զորոյ զինի և մարզն անօ-
րէնութեանս որք մախացեալ փառախնդիր ամ-
բարհաւածութեամբն ընդ պատիւ բարձրու-
թեանն բարգաւաճեալ փառօք աստուածա-
կարգ [Ա 208a] աթոռոյն Բարդուղիմէի և
Թադէոսի առաքելոցն և առաքելահանգեա
երիցս երանեալ Լուսաւորչին սրբոյն Դրիպորի
զոր աստուածային աջոյն հաստատեալ մարմ-
նացոյց տեղադրութեամբ և երկնահարաշ ազգ-
մամբ և ցուցիւք ի վեր քան զբան տեսու-
թեամբն զոր ասէ զթակալակն ամբախումբ
զխաչն լուսոյ * և զանճառ բարձրութիւնն

զաթոռն քրիստոսանման և զմեծ քահանա-
յապետութիւնն հանդերձ քաջաբերական ձայ-
նիւնս որ ընկալեալ ի պատրիարգէն կեսարու
ձեռնադրութիւն արքեպիսկոպոսութեանս որ
Թարգմանի եպիսկոպոսապետս որ ինքն ընկա-
լաւ ՆԼԲՆ. (?) ¹

Այսմ աստուածային բարձրութեան
ըմբախակեալ ոմանք արդենագիւտ նորաձայ-
նութեամբ՝ բառնան զերիցութիւնս սուրբ ա-
թոռոյն համապատիւս զեպիսկոպոսունս և
զհայրապետն ² ասելով թէ Միապէս ունին
զանուն եպիսկոպոսութեան՝ հայրապետն նոյն
[Բ 132a] զունակ և զպատիւն և չէ ինչ ա-
ռաւել ոչ պատիւ և ոչ կոչումն և եթէ է՝
կոչումն ձեռնադրութեան չկայ ³ յեպիսկոպո-
սութենէ ի հայրապետութիւնս և թէ զանա-
զան անուանք՝ մետրոպօլիտք և արքեպիսկո-
պոսք և պատրիարգ՝ մարմնական անուանա-
դրութիւնք են:

Եւ իմացեալ թէ չիք անունոր ոչ զիրն նշա-
նակէ: Արդ՝ անուանի անունս սարկաւադս որ է
սպասաւորս և քահանայ որ է սրբիչ և ե-
պիսկոպոս որ է այցելու և հայր որ բա-
ղում որդիս ի փառս ածէ և հայրապետ
հարց և կաթողիկոս որ է ամենապետ իբրեւ
զաստուած: Արդ աղէ ասա զինչ քակիչ հա-
մանունութիւն ⁴ կամ յոքնանունութիւնն խոր-
հրդոցն ⁵ կարեա ասել թէ չէ հայրապետն
սարկաւադ աստուծոյ. կարեա ասել թէ չէ
սրբիչ. կարեա ասել թէ ⁶ չէ այցելու: Դի-
տեմ զի զպետութիւն բառնալ կամիս զոր
ոչ կարես: Արդ՝ զինչ քակիչ են այդորիկ ա-
նուանք պետութեանն թէ ոչ առաւել հաս-
տիւ:

Դարձեալ լոյս ասի աստուածս տսին և
հրեշտակք լոյս նաւ մարդն լոյս անուանի
Արդ՝ զի համանուն են՝ և համապատիւ ոչ
ունին ասել: Երկինք տսի և երկնից երկինքս
ասի աստուծոյ աստուածս այսինքն արարիչ և
տէր ըստ դատողութեանս և տէրանց տէր և

1. Բ անուղայ

2. ԱՄատթ. ԻԳ. 50—51.

3. Ա Մատթ. 2. 51.

4. ԱԲ Ն՝ ի ընկէ

* Տես Ագաթանգեղոս

1. ԱԲ պապէ՝ ա ինձ համար անվերժանելի:

2. ԱԲ զեպան եւ զհրպան

3. Բ չկա 4. ԱԲ համանունութեանս

5. Ա խնդին Բ խնդն = խորհրդին, խորհրդոցն, խորհրդ-
դոյն.

6. Ա կարեւ ասել թէ Բ կարես թէ

իշխան և թագաւոր: Արդ՝ զի իշխան ասի և թագաւոր՝ [Ա] չէ՞¹ և աստուած:

Նկեսցուք և ի գրաւորական ստորագրութիւնս: Մովսէս և Ահարոն երիցունք նորա ասին,² արդ՝ չէ՞ր³ ինչ զանազանութիւն պատուոյ համանունութեամբն, ոչ ապաքէն Մովսէս յաստուածակոյս կողմն ասի, և նա՛ ի մարգարէս, ոչ ապաքէն յօրինումն իւզոյն սրբ[Բ]բութեան Մովսիսի հրամայեցաւ⁴ և ոչ նման այլ ամենայն յօրինածք կատարմանցն: Թողում գրազուսն ասել, առաւ ի հոգւոյն Մովսիսի և արկաւ զ.Հ.Բ. Ծերովքն: Արդ՝ մի հոգ [ւոյ]⁵ լի էր համապատիւս ասե՛ս թէ ոչ, զոր և երջանիկն Աստուածաբան արտաճառէ՛: Յայնժամ ոչ ամենեքին նմին արժանաւորք երեւցան դասու և կայենի, այլ ոմն այսմ՝ և ոմն այլում: Ըստ չափոյ՝ ինձ թուի՝ իւրոց մաքրութեանն, և այլն:

Ասի⁶ Մեղքիսեդեկ քահանայ կոչեցաւ և Բրիստոս՝ քահանայ ըստ կարգին Մեղքիսեդեկի:⁷ Արդ՝ ի ստուերականին և ի նորումն⁸ քահանայ է անուն և ոչ եպիսկոպոս: Ընդունայն է⁹ անուն և պատիւ եպիսկոպոսութեան՝ քահանայութիւնն բովանդակել, զոր և անունն է¹⁰ թագաւորութիւն, քահանայութիւն: Նւ այլ ոչ ևս ընդունայն է եպիսկոպոսութիւն:

Քահանայապետն և կատարողն Բրիստոս նախ կիսասարկաւագ, զի արար խաւազան չուանեայ, եհան զորս ի տաճարին,¹¹ և ևս նախ զրակարդաց, զի ետուն նմա զիրս և յարեաւ ընթեռնուր:¹² Դարձեալ՝ սարկաւագ, զի սփածեալ զենձակ լուաց զոտս աշակերտացն,¹³ նա և քահանայ, զիւրն բաշխելով մարմին և արիւն,¹⁴ եպիսկոպոս, յորժամ զփականս երկնից Պետրոսի հաւատաց¹⁵ և յորժամ փչեաց յառաքեալն հոգի սուրբ ասելով՝ Զոր կապիցէք յերկրի

եղիցի կապեալ յերկինս և զոր արձակիցէք եղիցի արձակեալ:¹ Եպիսկոպոսապետ, յորժամ զհոգին սուրբ ի վերնատունն² առաքէ, եպիսկոպոսունս զառաքեալն վերադրելով: Արդ՝ քակի՛չ այսորիկ անուանք և կոչմունք կատարելագունին, կարե՛ս թէ ամենեքեանդ. . .⁵

Դարձեալ՝ ձեռնադրութիւնք երիցութեան ասի Առաքելոցն ի Կանոնական Առաջարանութեան [Բ 132b]: Արդ ամենայն երեց եպիսկոպոս է. Փիլիպպոս սարկաւագ գոյով մկրտեաց զներքինին,⁴ [Ա 208b] զի՛նչ արգելու այժմ ի սարկաւագաց մկրտութիւն առնել:⁵

Դարձեալ՝ այսու զհայրապետն համապատիւ՝ ասելով թէ եպիսկոպոսն ձեռնադրէ զնա: Յիշեա՛ Մկրտիչն Յովհաննէս՝ զամենամաքուն մկրտելով զԲրիստոս. համապատիւ արդեօք Մկրտիչն և Բրիստոս: Յիշեա՛ և զառ ի յառաքելոցն ասացեալն՝ Ընդ նմին յարոյց և ընդ նմին նստոյց յերկնաւորս⁶ ի Բրիստոս՝⁷ համապատիւք արդեօք մեք և Բրիստոս և ոչի՛նչ առաւելութիւն նորա:

Դարձեալ՝ Ժառանգակիցս և մարմնակիցս և հաղորդս զմեզ ասէ.⁸ կամի՛ս զի զգլուխ անկեանն քակտեսցես և ի քո չափս իջուսցես. յայտ է թէ ոչ գոյով գլուխ, բոլոր մարմինդ գտցիս քանդեալ:

Ձեռնադրութիւն, ասես, ոչ է կարգեալ որիչ հայրապետութեան, այլ նոյնն երկրորդի զոր յայլ ազգաց ոչ կարես ցուցանել զչլինելն, իսկ ի մերումն բազում ինչ ի կարեւորացն ոչ գտանի թարգմանեալ: Նաև զիտէին իսկ ոչ նախկի վարդապետքն հայոց, թէ զարթիցի երկրորդ Արիստոզմ ի դուռնս Նոր Սիոնի՝ պառակտել կամելով զհայրենի թագաւորութեան զպատիւն նոր և⁹ տարածամ գատաստանաւ:

Արդ՝ ձեռնադրութիւն քահանայութեան ուրոյն է և եպիսկոպոսի ուրոյն. իսկ որ ի վերայ ննջմանն խորհրդածութիւնք՝ միատես ի մերումն, իսկ յայլ ազգս ոչ ևս: Նաև բա-

1. ԱՅ ԸԷ 2. Սաղմոս ԴԷ, 6. 5. Ա ԸԷ Բ ԸԸՐ.
4. Ա ԵԼԻԳ Լ, 22. 5. ԱՅ մի բառի տեղ դատարկ, որ նշանակում է պակաս. 6. Ա ԱՐԴ.
7. Ա ԵՔՐ. Ե, 3-6.
8. ԱՅ ի Նորունս 9. ԱՅ ընդունայն է
10. Ա անուն է Բ անուն է 11. Ա Յօհանն. Բ, 15.
12. Ա ՂԵԼԿ. Գ, 17. 13. Ա Յօհանն. ԺԳ, 4.
14. Ա Մատթ. ԻԶ, 26.
15. Ա Մատթ. ԺԶ, 48-49

1. Ա Յօհանն. Ի, 22.
2. Բ Եպս'ն
3. ԱՅ ԲԼԵՄ է ԹԵՐԻ. 4. Ա Գործ. Ը, 38.
5. Ա անուն է
6. ԱՅ յագաղափարագիրք Էրս.
7. Ա Եփես. Բ, 6. 8. Հռոմ. Ը, 17.
9. Ա ԸԷԲ.

զուամ ևս այլ կարգ կարեւորք որ չէ թարգմանեալ ի Հայկական լեզու:

Դարձեալ՝ սարկաւազն բեմական է օժմամբ [Բ] և ձեռնադրութեամբ, իսկ մահուն խորհրդականութիւն աշխարհականի [Ի] մեբումս իսկ յայլ ազգս ոչ ևս:

Ըստ նմին և Հայրապետական կարգ ձեռնադրութեանն մնացեալ բաւական¹ Համարեալ զնոյն կոչումն, զի կրկինն այն հոգի զօրանայ ի վերայ որպէս յԵղիայէ, յԵղիսէէ.² և թէ ասես ոչ ինեկ յայլ ազգս զի՞նչ իմանաս զիս որ հրգածութեանն ժամն զոր թագաւորն հրամայէր ի վերայ Պրոկղի, յորժամ [յ]եպիսկոպոսութենէ ի հայրապետութիւն կոչին ըստ շարածութեանն Սոկրատայ: * Իսկ եթէ ի կանոնական կարգի ղեպիսկոպոսս յարակ[ւ]ցապէս յիշել ասես՝ զհամանունութեան³ դէմ յողմապէս նշանակեցաք:

Նաև զկաթողիկոսն ասել ընդէր թողուս որում զգլխաւորութիւնն է հաւատացեալ, և զսուրբ ժողովն Նիքիսոսի թուեալ ՄԸ. կաթողիկոսս և Ը. եպիսկոպոսս⁴ ասէ, և կամ թէ Առանց մայրաքաղաքացոյն մի իշխել իրս ինչ առնել: Այլ և առ ի Կղեմեա[յ]⁵ կարգեալ Կանոնսն՝ եպիսկոպոսս յերկից եպիսկոպոսաց ձեռնադրեալ՝ ** զհայրապետէն ակնարկէ, ըստ համանունութեանդ զոր բազում անգամ ասես:

Իսկ որ զսուրբն Յովսէփ լոկ տեղապահութեամբն գլուխ եպիսկոպոսաց անուանէ և իշխեցող աստիճանով⁶ ի վեր գոյ, ապա որ ձեռնադրութեամբն իսկ է եպիսկոպոսա-

պետ՝ զիմորդ նուաստանայ յիւրմէ գերարդնութենէն:

Թողից ասել զնախասելին զիննեակ դասուցն ունակութիւնսն զանազան անուամբք և ըստ մականունութեանցն խորհրդական իրակութիւն ըստ գերակայութեան և ստորագասութեան ներգործութեանց և նոյնաբառակ հանգիտամէտ զուգակշռութեամբ [Բ 133a] զեկեղեցւոյ բարեկայելուչ դասակարգութիւնս, սկսեալ ի նուաստագունիցս մինչև ի գերազարդ կատարողապետին օրբազնագործութիւն աստուածատեսակ ունակութեանն, վերլուծական արտասանութեամբ ստուգաբանեալ յառաքելահետեոյն Դիոնէսիոսէ [և] յայլոց երջանկափառ վարդապետացն, որ զխարդախող հնարիմացութիւնս նորաձայն² խորագիւտ հակասութեան կարող է պարսաբանել:

Բայց անուր և անտեղեակ էր այսպիսի³ թարմատար և շամբուշ կարծիք ի նախակայից երիցունեացն մերոց վարժապետաց՝ եթէ գտցի որ որդառքելոցն զնախակարգեալ հաստատութեամբ երկնից զաթոռ երկցս երանեալ Հուսաւորիւն և նորին զօրացեալ հոգւով յաջորդողացն՝ թուակցութիւն յիսնաբանակ երկք հանդերձ⁴ աստուածաճոկ երամս * զրպարտեալ նախատանօք և վայր իջուցանել ջանայցէ, հայրանարգու զողով ոչ [Ա 209a] միայնոյ, այլ այսբանեաց և այսպիսեաց⁵ որջասուղեալ քաղախուրդի յանդիմութեամբ և կեղծօք քրէականն⁶ բեռնաւորեալ զպարտաս: Վասնորոյ զարթիք փութապէս որդիք զօրու-

1. Ա չիք. 2. Ա Զորք. Թագ. Բ. 9.

* ԵԱՆ. Անանիայի այս յիշատակութիւնը Սոկրատի մասին՝ մեզ հասած հնագոյն տեղեկութիւնն է (Հմմտ. Սկտ. Սքու. Եկեղ. Պատ. հր. Բ. Վ. Տ. Բով. Վաղարշ. 1897. Զառաք. եր. Ժ-ԺԱ.), Բայց աւելի արժանի է ուշադրութեան Անանիայի մէջ բերած զիտորհրդածութեան ժամն ասացուածը, որ անպայման փոքր-Սոկրատից է եւ Մեծումը չկայ (տե՛ս Մեծ եւ փոքր Սոկր. եր. 673). Այս վկայութեամբ անպայման ազդեցւում է, որ տաներորդ դաբում Սոկրատի Եկեղ. Պատմութեան փոքր խմբագրութիւնը արդէն կար եւ ծանօթ ու տարածուած գրուածք էր:

3. Ա զհամանունութիւն

4. ԱԲ. մ. Ը Կթղկս. եւ Ը եպսս.

5. Ա առ Կղեմեա. 6. Բ իշխեցող աշտիճանով.

** Տե՛ս Սահմանք եւ կանոնք սուրբ առաքելոցն ի ձեռն Կղեմայ առաքելոյ հիթանոսաց.—Ա. Եպիսկոպոս ձեռնադրեացի յեպիսկոպոսաց յերկուց եւ կամ յերկց (Կանոնագիրք):

1. Ա գերբնէն. Բ գերաբնէն.

2. ԱԲ հար իմացութիւնս նր. ձայն. 3. ԱԲ սսի.

4. ԱԲ. ձ. նաքանակերիք, հանդերձ.

5. Ա այլք այսք ե՛ց ես սնց

Բ այլք այս քնքք. եւսն՝ ց. 6. Բ րէական.

* ԵԱՆ. Յիսնաբանակ երկք հանդերձ աստուածաճոկ երամս ասելով հասկանում է կաթողիկոսներին, և յիշել, Եովհաննէս Պատմաբան կաթողիկոսի վկայութեամբ՝ իրենով լրացաւ՝ Լուսաւորից սկսած՝ կաթողիկոսների յետո՞ւ թիւը.— եւ այսպէս ինեւ հանդերձ յցեալ եղեւ թէ յորեմեայի յիսնակի համարոյ հայրապետութեանս Հայոց, որ սկիզբն առ յերջանիկ եւ ս. Լուսաւորէն Գրիգորէն (տե՛ս Շարիք Հայրապ. Հայոց Յայտարարութիւն, տպուած Ստմ. Անեցու (Վաղարշ. 1893) վերջում եր. 272—277, դժբաղդաբար մի սխալաշատ եւ բողոքովին անիմամ հրատարակութիւն), Եովհաննէս Պատմաբանից յետոյ հայրապետական գահն են բարձրանում Տ. Թէոփորոս, Տէր Եղիսէ եւ Տէր Անտիոա Մոկացի, ուրեմն՝ այս հաշուով ուղիղ 53-դ կաթողիկոսը:

Թեան հօրն լուսոյ և ամենայն որ ոք տեսն
և ճշմարտութեանն իցէ ակնարկութեամբ առ
աստուած, և ամենայն յաջողակի կորովու-
թեամբ ի հանդիսի անցեալ ճակատոյս Նորոյս
Խորայելիի զի ծանր աղէտ և ահագնարորոք
հրդեհք¹ չար հերձուածոց, [որ] ծարակեալ էր
յերկրի, հնոցացան ի մէջ աստուածատունկ
գարաստանի հոգեծաղիկ ուղղափառութեան
հաւատոյս, զի թէպէտ և զանազան [Բ] օրոմ-
նացանութիւնք հերձուածոց ծարակեալ էր
[յ]երկրի սակայն ամենայն եկեղեցական պե-
տութիւնք ըստ իւրաքանչիւր կայի բարձրու-
թեան² պատշաճեալ մնայր, իսկ այս դաժան
և չարագիւտ կորստական իմացմունք զամե-
նայն գլխաւորութիւնս եկեղեցւոյ միանգամայն
տապալել ունի և բառնալ առաջնորդական
հաստադրութեան³ և սահմանի, որպէս և իւ-
րաքանչիւր առանձին լինել քուրմ և տուն,
և հասարակաց չարապիւթութիւն: Այլ զմեզ
փրկեցէ Բրիտանոս յոյսն մեր ի չարէ՛ աղօ-
թիւք սրբոցն:



Ռ.

Ն Ո Ր Ի Ն

ՏԵՍՈՒՆ ԱՆԱՆԻԱՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Բայց⁴ արդ սակաւութ և վասն ասացե-
լոցս ի մէջ եկեացն բանք. որ ասէ՛ Ո՛չ ասի
աշտիճան եպիսկոպոսի, այլ աթոռ միայն:

Սախ ի Դիոնէսիոսէ պատմի յԱռաջին Դրո-
ցըն մեկնութենէ [յ]երրորդ⁵ ճառին. իսկ զխո-
նարհագոյնն, ասէ, դաս զնոյն մերոցն առաջնոր-
դացն և զաշտիճան գերակայսն ևս վերադոյնս
առնեն խորհրդազգած.⁶ նորին յերկրորդ
Դրոցն ի վերջին ճառին. Եւ աստուածատեսա-
կազոյն աշտիճանօք ասացելովք հպել առ գե-
րագոյնն ճառագայթ. յերրորդ Դրոցն նորին.
Եւ թէ որպէս աշտիճանք են առաջինք և մի-

ջինք և վերջինք այսոցիկ երկնաւորացն են
կարգաւորութիւնք:¹

Իսկ եկեղեցականիս առաջնորդութեանն,
որ ասին աշտիճանք ի Պատ[Ա]մութեանցն
Եկեղեցւոյ յերրորդ² գպրութենէն. Եւ յայ-
սրմ ժամանակի, ասէ, ջայն վայր Կղեմնէդոս
առաջնորդէր եկեղեցւոյն Հռոմայեցւոց, զի և
նա զերկրորդ աշտիճան [Բ 133b] ունէր զե-
պիսկոպոսութեան, որ եղեն անդ յետ Պետ-
րոսի և Պաւղոսի:

Նորին յերեսներորդ³ [երրորդ] ճառին.
Եպիմոս [= Պլինիոս] Սեկունդոս դատաւոր
աշխարհին պարտաւորեաց զոմանս ի քրիստո-
նէից անտի և ելոյժ զնոսա յաշտիճանաց իւ-
րեանց:⁴

Այլ յԱ. ճառէն. Զի և նոքա երեւելիք
էին յաւուրսն յայնոսիկ, որ ունէին զաշտիճան
զառաջին կարգին, որ յառաքելոց անտի:⁵

Ի Հինգերորդ գպրութենէն ի վեցերորդ
ճառէն. Եւ յետ սորա կալաւ երկոտասանե-
րորդ զինի առաքելոցն Ալեթերոս. ի նոյն աշ-
տիճանի են և ի նմին ուսման դնացին և ի
առաջութիւն, զոր ընկալաւ յեկեղեցի յառա-
քելոց անտի:⁶

Նորին [ի]. ԴԸ. ճառէն. Բազում արտա-
սուօք առ ոտս (նորա) Զեփրիանոսի եպիսկոպո-
սի Հռոմայ: Եւ ընկենոյր զանձն իւր առաջի ա-
մենայն մարդոյ, ոչ միայն առաջի այնոցիկ միայն
որ էին յաշտիճանի յեկեղեցւոյն:⁷

ՅՈւթերորդ գպրութենէն, յութերորդ
[= յիններորդ] ճառէն. Եւ Փելիաս Թեմայիս
քաղաքէ, այր որ փառաւորեցաւ⁸ յաշտիճան
պատուոյ:⁹

ՅԱգաթմանգեղոս. Եւ զոմանս յորդւոցն¹⁰
քրմացն առեալ իւր զյառաջասուն¹¹ առ-
նէր, որ յաշտիճան եպիսկոպոսութեան արժա-
նիլինէին, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ:

4. Դիոնիսիոսի հաստաճանքը Գալթ Էպիսկոպոսի եւ
Ստեփանոս Սիւնեցու Թարգմանութիւնցն են առնուած,
որ մենք դժբաղդաբար հնարաւորութիւն չունեցանք հա-
մեմատելու. ձեռք տակ չունենալով պէտք եղած ձեռա-
գիրը (տես եւ Զարք. Հայկ. Թարգ. 381):

2 ԱՅ յերկրորդ. Տես եւսեր. Պատմ. եկեղ. (Հին
Թարգմանութիւն, վ. Եւ. 1877. եր. 179 եււն) Գպրու-
թիւն երրորդ. ԳԼ. ԺԵ. 5. Ա յերեսներորդ.

4. Եւս. Գպ. Գ. ԳԼ. 1. Գ. եր. 216. 5. Եւս. Գպ.
Գ. ԳԼ. 1. Ե. եր. 253. 6. Եւս. Գպ. Ե. ԳԼ. 2. եր. 355.
7. Եւս. Գպ. Ե. Գ. ԻԲ. եր. 408. 8. Ա փճ. արձաւ.

9. Եւս. Գպ. Բ. Գ. Թ. եր. 636. 10. Ա յորդոցն.

11. Ագաթ. Եւր զառաջասունս ձեռնասունս առնէր:

1. Բ հրդեհք.

2. Ա կայ ի քարճրութեան Բ կա ի քարճրութեան.

3. Ա հատադրութեան. 4. Բ այց.

5. Ա Ե՛րդ Բ Երդ. 6. Ա խնդ զազգ Բ խնդա-

զազգ. Տես Հ. Գ. Բ. Բ. Խորհրդապգած առնել:

Նորին, * Եւ որ յաշտիճան յեպիսկոպոսութեան ձեռնադրեցան ի նմանէ աւելի քան զԴժ: 1 Եւ վասն Վրթանիսի ասէ. Որ և նա յաշտիճան պաշտամանն եկաց յերիցութեան:

Եւ յայանի է ամենայն ուրեք, զի ոչ երեւի յատուկ երիցութեամբ կացեալ 2 մեծին Վրթանայ, այլ ի հայրենականն աթոռ, զի [Բ] ոչինչ է խորի 3 աստուածային գրոց ամենայն բարձրագունիցն երեց անուանել 4 և քահանայ, որպէս զՄովսէս և զԱհարոն իրիցունս կոչել և Կենարարին՝ քահանայ յաւիտեան ըստ կարգին Մեղքիսեգեկի: 5 Թէպէտեւ բազում ուրեք քահանայապետ 6 անուանի: Եւ դարձեալ ասէ. Իսկ սա առանց անցանելոյ ունի զքահանայութիւն առ ի կարող լինելոյ՝ այլովքն [հանդերձ], և քահանայ մեծ ի վերայ տանն աստուծոյ: 7—Եւ սուրբ Լուսաւորչին և սրբոյն Սահակայ, յաճախ կարգայ որպէս աղախին զտէր: 8—[Ա 210b] Յաճախ կարգացեալ լինի քահանայդ անունս զոր գիտողացն թողաք:

Արդ միթէ ոչ անուանի աշտիճան եպիսկոպոսաց, մանաւանդ եթէ առաքելոցն ասի ի Տեառնէ ի ժամ ամբառնալոյն շնորհել աշտիճան: 9 որ կարի բարձրագոյն է իմանալ քան զքահանայակարգ, որ յայսմ ժամու ընկալան, որպէս Դիոնէսիոսի թուեցաւ եթէ ինքն Տէրն մեր ի քահանայապետական ածելով կոչուամ զսրբազանսն 10 զիւր զաշակերտան, սակայն զկատարելութիւն ի սրբազանն Հայր և ի Հոգին սուրբ վերաձգէր 11 ասելով նոցա՝ Մի՛ մեկնել յերուսաղեմէ մինչև զգննուցուք զօրութիւն ի բարձանց: 12 Որ և նոյն Դիոնիսիոս. Որպէս ասացաք եթէ երկնաւորացն աշտիճան առաջինս և միջինս և վերջինս ամենայն երկնաւորացն զարգուց:

Այսչափ ինչ բաւականացի յաղագս աշտիճանաց բարձրագոյն աթոռոյն, որում և

երանելի տէր Կոմիտաս զինքննէ 1 և զայլոց յաշտիճան հայրապետութեան ասէ կացեալ:

Արդ և ի սակս քահանայից որ ասի ի Սոստրովայ ոչ աթոռ ունել այլ աշտիճան միայն իբր ճանապարհորդաց [Բ 134a] և ոչ կայանաւորաց՝ ասի ի Նիկիայ սուրբ Ժողովոյն մատասան 2 զլուխն. Որք իրիցունք լինին և այլոց Ժողովրդականն ցանկայ 3 յափշտակել՝ զայնպիսին ընկեսցեն 4 ի բաց յաթոռոյն և ի կարգէ քահանայութեան և բնաւ իսկ ի պաշտամանէն ի բաց մերժեցեն:

Նեոյ-Կեսարիայն 5 որ և այն Նիկիա[յ] անուանի. Վասն երիցանց, որ ի բռնութենէ հեթանոսաց նախ քան զտանջանս զոհեցին և ճշմարտութեամբ զարձան, զպատիւ յաթոռոյն կալցին, այլ ի թարգմանութիւն նստել 6 կամ պատարագ մատուցանել կամ աւետարան կարգալ ոչ ունի իշխանութիւն: 7

... 8 Կարձառտի կանոնաց, որ և այն կոչի Նիկիայի, ԴԱ. զլսոյն. Պարտ է, ասէ, զիրիցունս որ զոհեցին և ապա զարձան և խոստովան եղեն ոչ ամենեւին լուծանել, աթոռոյն միայն արժանի լինել, այլ ոչ պատարագ մատուցանել և ի վարդապետութեան կալ: 9

1. Բ Կ'ամիտս զինքննէ.

2. Տես Կանոնք Նիկիայ Ս. Ժողովոյն, գլ. ԺԷ. եւ որք երիցունք լինին եւ այլոց քաղաքի եւ Ժողովրդեանն ցանկան յափշտակել, ... ի զայնպիսին ընկեսցէ ի բաց յաթոռոյ եւ ի կարգէ քահանայութեան եւ բնաւ իսկ ի բաց մերժեցեն ի պաշտամանէն: (Ձեռ. Թ. 736—2, եր. 36):

3. Բ ցանկաւ. 4. Ա ընկեսցին.

5. Ա մերժեցեն Նեոյ-Կեսարիայն.

Բ մերժեցեն Նէոյ կեսարեայն.

6. ԱԲ ի թարգմանութեանս ստեալ.

7. Տես Կանոնք Անկիւրեայ, գլ. Ա. Վասն երիցանց, որք ի բռնութենէ հեթանոսաց մինչև ի տանջանս ամէլ ի վերայ եւ մահ սպառնալ, եւ նորա առ երկիւղի զոհեցին եւ ապա ջանացան ներտեցան եւ ճշմարտութեամբ զարձան վանս այսպիսեացս կամ եղև, զի զաթոռոյն կարգն կալցին, այլ ի թարգմանութեան նստել կամ պատարագ մատուցանել կամ աւետարան կարգալ ոչ ունի իշխանութիւն: (Ձեռ. 736—2, եր. 44):

8. ԱԲ Մի կամ երկու բառ պակաս:

9. Տես Կանոնք Երկրորդ Նիկիական, զոր եղին ՅԺԺ. եպիսկոպոսունքն կրկնաբանելով կարճ ի կարճոյ գլուխըս ՏԺԺ. — գլ. Ա. Պարտ է զերիցունս, որ զոհեցին եւ ապա զարձան եւ խոստովան եղեն ոչ ամենեւին լուծանել, աթոռոյն միայն արժանի ստանել, այլ ոչ պատարագ մատուցանել եւ ոչ ի խօսան կալ եւ ոչ այլ պաշտօն պաշտել քահանայութեան: (2. եր. 207):

* ԱԲ ի նմանէ Նորին.

1. Բ. ԳԺ. — ԱՂ ԿԵԵԼ. 5. Ա ԽԺԻԲ 4. ԱԲ անուան՝ Է.

5. Ա Սաղմ. ՏԺ. 4. 6. ԱԲ ք'ալ.

7. Ա. ԵԵԲ. Ե. 7. (Է. 24):

8. Թուում է ընդմիջարկութիւն կամ աղճատում:

9. Ա. ՂԵԼ. ԻԳ. 49.

10. Ա զսրբզնն Բ զսրբազնն.

11. Ա Կ' թղոյն էր Բ վերածգոյնէր. "Յ" տա-

ւերը ջնջման նշանով:

12. Ա. ԳԻԹԺ. Ա. 4. ՂԵԼ. ԻԳ. (49):

[Ա] Բարսղի երեքտասան զլխին. Վասն երկցանցի որ անպատեհ է անարժան յամուսնութիւնս անկան՝ աթոռակցութեան¹ արժանաւորս առնել միայն ընդ յայլսն, բայց յայլմէ պաշտամանէ ի բաց հրաժարել և իւրոց յանցանացն հոգ տանել²

Շահապիվանից. ³ Որ ազգականացն պըսակ աւրհնեցէ՝ յաթոռոյն և ի քահանայութենէն անկցի, եթէ երէց է և եթէ եպիսկոպոս, այլօքն հանդերձ⁴

Բայց զի մի՛ զամենայն ժամանակս ի յաճախութիւն վկայութեան յաճախեցուք՝ թողեալ լիցի մնացորդք [Բ] բանիցս իմացողաց և մեք զարձգուք զայլովք ասացուածովքն խոտորնակօք:

Զի ասի ի Դրի անդ նորին հակառակողի, թէ Առանց .Բ. կամ .Գ. եպիսկոպոսաց անհնարին է⁵ ումք ձեռնադրել] եպիսկոպոս, վասն զի ոչինչ աւելի բերելով [հայր]ապետին քան այլ եպիսկոպոս[աց՝ կ]արի յոյժ գտանի սխալեալ ի մտաց [սրբա]զան տառից. զի ոչ զայս ամենայն եպիսկոպոսաց երևի յաւանդութենէ առաքելական եկեղեցւոյ ասել: Վասն զի միայն հայրապետի, կամ որ ինչ վերագոյն քան զեպիսկոպոսութեան հասանէ կոչիլ վիճակ՝ անդանօր և եթ պիտանայու են հարկաւորութեանցս այսոցիկ սահմանք: Վասն զի ուր կաթողիկէական⁶ լինի կոչումն, որպէս նախապատուութեան⁷ սուրբ տեղեացն Երուսաղէմի, հարկաւոր է ժողովոյն միասնականի զայսոսիկ վճարել, որքունակ ասի վասն Յա-

կորայ եղբօր Տեառն ի Պատմութեանց Եկեղեցւոյ յերկրորդումն զպրութեան, անդ ասելով ի բանից Կղեմենդեայ, եթէ ԶԵԱԿՈՐՈՍ զայր արդար ընտրեցին նոքա յեպիսկոպոսութիւն Երուսաղէմի, և այս յանուանէ զերիս միայն յիշատակէ զառաքեալսս, այսինքն զգըլխաւորն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, զորս ի Փրկչէն մերմէ, ասէ, ընկալեալ զչնորհս գիտութեան և ոչ կարօտ յումքէ փառաց իրիք, և որ ի կարգին է. ¹ և յետ այլոց ասէ, Իբրև անկան նոքա ի խորհրդոց անտի, զոր ունէին վասն առաքելոյն² Պետրոսի, ապա դարձան ի վերայ Յակովբայ եղբօր Տեառն, այն որ ընկալաւ յառաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան³ [Բ 134b] . . . և ⁴ յայլում վայրի ուր սակս [վաղեմի]⁵ աթոռոյն [Ա 210a] Յակոբայ ասէ պահիլ մինչև ցայն ժամանակս, նոյնպէս յառաքելոցն առաջին ասէ առնուլ զաթոռ եպիսկոպոսութեանն Երուսաղէմի: ⁶

Այլ և զՊօղոսէ և զԲառնաբայ ասէ Ղուկաս յերկց անտի առնուլ զկոչումն կատարեալ պատրիարքութեան և ոչ եթէ այլ ինչ նուաստութեան կարգի. զի թէպէտ և ասէ ի նոյն Պատմութեանն Եկեղեցւոյ, եթէ Պօղոս վասն բարբառոյն Տեառն, որ եղև յերկնից ի վերայ նորա, ⁷ կոչեցաւ և եղև առաքեալ, ոչ ի մարդոյ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի .Բրիստոսի. ⁸ սակայն ի ժողովելն յԱնգիլոք, ուր էին բոս եկեղեցւոյն մարգարէք և վարդապետք, Բառնաբաս՝ և Շմառն կոչեցեալն Նիւգէր ⁹ և Ղուկիոս Կիւրենացի և Մանայէն դայեակորգի ¹⁰ Հերովդէի և Սողոս. ¹¹ մինչդեռ ի պաշտամանն կային ասէ Հոգին սուրբ, որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍողոս ի գործ, յոր կո-

1. Ա աթոռակն՝ս Բ աթոռակցւն՝.

2. Տես Կանոնք Բարսղի ԳԼ ԺԳ. — Վասն երկցանցի որ անարժան եւ յանապատեհ ամուսնութիւնս անկեալ են . . . աթոռակցութեան արժանաւորս առնել ընդ այլսն միայն. իսկ յայլմէ պաշտուէ պաշտամանն ի բաց հրաժարել . . . եւ իւրոց յանցանացն հոգ տանել (2. եր. 116):

3. ԱԲ Շահապի վանից.

4. Տես Կանոնք Շահապիվանի ԳԼ ԺԳ. — . . . եթէ որ այնպիսեացն պսակ օրհնեցէ . . . յաթոռոյն եւ ի քահանայութենէն անկցի եղեցին (2. եր. 153):

5. ԱԲ չիք է.

6. Ա Կթղէկ՝ն Բ Կթղէակ՝ն. = կաթողիկոսական. ?

7. Ա Նիսպտմէ՝ն Բ Ն՝ խապատմէ՝ն = նախապատմութեան.

1. Տես Եւսեբ. Պատմ. Եկ. եր. 74.

2. ԱԲ առաքելոցն.

3. Տես Եւսեբ. Պատմ. Եկ. եր. 125-6.

4. Բ չիք՝ եւ.

5. Ա վն՝մի Բ այս բառի տեղը բաց. = վնեմի ?.

6. Տես Եւսեբ. Պատմ. Եկ. եր. 242:

7. Ա Գործ. Թ. 4.

8. Ա Գաղատ. Ա. 1.

9. Բ իւգէր.

10. ԱԲ դայեակ. որդի.

11. Բ Սաղոսոս.

էնցեալ է իմ զգոսաւ և նոյն ժամայն պահեալ և աղօթեալ եղին ի վերայ նոցա¹ ձեռս և նորա առաքեալք ի Հոգւոյն սրբոյ իջին ի Սեւէկիա. ուր և ի Պամփոս յետ կոյմանն փոխեալ² լինի անուն Սօղոսի Պօղոս, զոր ոչ ունէր ցայն վայր: Այլ և ինքն Պօղոս վասն Ղուկայ ասէ. Ոչ այսչափ միայն, այլ և ձեռնադրեալ ևս յեկեղեցւոյն նշգհհակից մեր եղև. այլովքն հանդերձ: ³

Տեսանեն որպէս յայտնի է որ աւետարանչի աթոռն խնդրէ միաբանութիւն եկեղեցւոյ առ ի ձեռնադրութիւն, որզու[Յ]նակն յետ եղբորն Տեսան ասի ի Պատմութեան⁴ Եկեղեցւոյ վասն Շմաւոնի Կղէովպեանց, եթէ Ժողովեցան առաքեալքն, որք մնացեալք էին յայնրմ ժամանակի և միաբան ընտրեցին Շմաւոն ի ունել զաթոռն Յակոբայ:

Այլ և յաղագս մայրաքաղաքացւոյն, այսինքն թագաւորականին Հռովմայ, ասել ի նոսին ունել յառաքելոց անտի զեպիսկոպոսութիւն. և վասն Փրիքանոսի եպիսկոպոսի Հռովմայ⁵ ասէ՝ Ժողովել բազմաց առ ի ձեռնադրութիւն, և ապա տեսին աղաւնի ի վերուստ իջեալ ի վերայ Փրիքանոսի,⁶ զոր առժամայն նստուցին [Ա] յաթոռն եպիսկոպոսութեան:

Եւ զի մի⁷ կարի զետեղեալ գտցուք յայսմ ի տեղւոջ ամենայն ուստեք. յայտնի է ի ժամանակս առաքելոցն և յետոյ ի սուրբ հարանցն, զի յաղագս պատրիարքի հարկաւորարար գտանին Ժողովեալ, որպէս ի Կոստանդնուպոլիս և վասն Նեքտառայ⁸ և Յովհաննու Ոսկէբերանի և Պրոկզի և բազում եպիսկոպոսաց հրամայեցաւ զՀայրապետական ժամն խորհրդածութեանն կատարել ի վերայ Պրոկզի և նստուցանել յաթոռ հանդերձ մայրաքաղաքացեացն թխտովք Հռովմայ և Աղէքսանդրի և Անտիոքայ, որպէս պատմի ի Սոկրատայ⁹ մատենագրէ

ըստ կանոնական հրամանի, որպէս ասէ՝ Ժողովեալ եպիսկոպոսաց հանդերձ մայրաքաղաքաց[ւ]ոյն հրամանաւ:

Որ գտանի և ի մերոյ Լուսաւորչին կոյմանն՝ հանդերձ մայրաքաղաքաց[ւ]ոյն Ղեռնդիւ Ժողովեալ բազմութիւն եպիսկոպոսաց, զի ձեռնադրեցեն զսուրբն, աւանդելով ի նա զպատիւ քահանայապետութեանն խոնարհութեանն Բրիստոսի և զբարձրութիւն եպիսկոպոսութեան փառաւորութեանցն Աստուծոյ, սրբով աւետարանողն¹ [Բ 135a] եղին ի վերայ նորա զձեռս Ժողով եպիսկոպոսացն և զլիաւորն Ղեռնդիոս:

Ահա կրկին պատիւ խոնարհութեանն Բրիստոսի և բարձրութեանն Աստուծոյ պատիւ մեծ, ուստի կարող է ուսանել իւրաքանչիւր որ, եթէ ոչ եպիսկոպոս լով, այլ և արքեպիսկոպոս և մետրապօլիտ և կաթողիկոս, որպէս ասէ զՂեռնդէ, նոյնպէս և զսուրբ հօր[է]ն մերոյ, այլ և վասն [Եւ]սեբեայ² Հռովմայեցւոյ. և ի սուրբ Կաթողիկէսն³ ասէ՝ այսպիսիքս են կարօտ Ժողովոց առ ի ձեռնադրութիւն:

Իսկ լոկ եպիսկոպոսացն ոչինչ հարկ անհրնարին ի վերայ կայ. ⁴ որպէս ասի յԵկեղեցւոյ Պատմութեան վասն Յովհաննու աւետարանչի երթալ ի զաւառս հեթանոսաց՝ էր ուր եպիսկոպոս ձեռնադրել, էր ուր եկեղեցիս շինել, և էր որ այլ ինչ ի կարգաց եկեղեցւոյ: ⁵

Սա և Պօղոս ասէ արծարծել Տիմոթէի զընորհան, ասէ, զոր ընկալար ի [Ա 210b] ձեռնադրութենէ իմմէ, ⁶ որ է միաւորական և ոչ բազմաւորական. ⁷ այլ և առ Տիտոս գրէ, զի կարգեսցես ըստ քաղաքաց երիցունս. ⁸ և ի նոյն յարէ՝ Թէ պարտ իցէ եպիսկոպոսին անարատ լինել որպէս և ⁹ աստուծոյ տնտեսի. ¹⁰ յայտ է թէ Պօղոս իբր զերազանցեալ ամենայն ¹¹

1. Աս աւտ' ընդն.

2. Ա այլեւ սեբեա Բ այլ եւ վասն սեբեա

3. Աս կթղկսէն

4. Բ կա.

5. Տես Եւս. Պատմ. Եկ. Գ. Գ. գլ. ԻԳ.

6. Ա Տիմոթ. Առ. Գ. 14. Տիմոթ. Երկ. Ա. 6.

7. Ա ըզբամէ քն. Բ զբազմաւորական.

8. Ա ըստ քաղաքաց քաղաքաց իրիցունս.

9. Ա չեք՝ եւ.

10. Բ ... Բ: Ա. Տիտոս Ա. 5.

11. Աս յամենայն.

1. Աս նորա Տես Գործ. ԺԳ. 1-9.

2. Ա գտեալ.

3. Ա Երկ. Կորնթ. Բ. 19.

4. Աս ի պատմութ. Տես Եւս. Պատմ. Եկ. Եր. 177.

5. Աս եւա՞ս ի Հռոմայ՝.

6. Տես Եւս. Պատմ. Եկ. Եր. 478.

7. Աս զմի մի.

8. Ա Նեքտատիոս.

9. Սոկրատի մատն տես Գ. Թղթի ծանօթութիւնը.

կարգօք ոչ միայն եպիսկոպոս կարգել անձամբ¹ այլ և ի վեր քան զեպիսկոպոս կարգէ զՏիտոս որով հրաման տայ² նմա եպիսկոպոս կարգել³ անձամբ և ոչ բազմօք յասելն⁴ թէ կոյուսցես և ոչ թէ կոյուսջիք:

Արդ եթէ աշակերտն Պօղոսի այնպիսի ունէր կարգ, որ և⁵ ինքնիշխան եպիսկոպոս⁶ կոչել կարողանայր, ուրեմն անգիտանաւ գուհայրապետին⁷ անկարողալ առանց ընկերաց այսոսիկ. [Բ] քանզի ի ձեռնադրութիւնս մեծին Բարսղի և առ ի քէն իսկ զընցաւ հակառակ քոյին իմաստիցդ. վասն զի հայր Աստուածաբանին բռնադատեալ⁸ զտիրութիւնն իւր առ ի լրումն հարկաւոր թուոյն⁹ կանոնականի. քանզի ի վեր քան զեպիսկոպոս ունէին ձեռնադրել. այլ և վասն նորին Աստուածաբանի ոչ այսպէս գտանի միայն եպիսկոպոս գոյով. և մերն երջանիկ ծնօղն առանց եպիսկոպոսաց պատմի միայնակ ինքնիշխան բազումս ձեռնադրել եպիսկոպոսունս [ուս]տի և սակս որդւոցն քրմացն ասի թէ ընկալան ի նմանէ ձեռնադրութիւն. և [ոչ] եթէ ինոցանէ, որպէս ի բազմաց: Նմանապէս և յազապ չորեքհարիւրոցն¹⁰ ձեռնադրել յաշտիճանս միաւորական ասի թուով և ոչ բազմաւ [որական]. որպէս և զհիստակիսէ տէ, ձեռնադրեաց¹¹ և տացէ նոցա և ոչ թէ տացեն, զոր և, ասէ, ձեռնադրեաց և ետ առանձնակի իշխանութեամբ. և թէ ոչ ունէր աւելի աշտիճան քան զեպիսկոպոսաց, անկատար, ըստ քեզ, գտանին գործեցեալքն:

Ա՛ւր ապա տանիս զասացեալսն վասն սուրբ առաքելոցն իւրաքանչիւր ումբէ: Ընկալաւ, ասէ, այս անուն աշխարհ ձեռնադրութիւն յայս անուն առաքելոյ, * և առ-

հասարակ միաւորականօք վարին թուով ասացեալքն. կամ աւր գտանի, որպէս ասացաք, ի պատմողաց [Եւ] Սերեալ[Յ] կամ Սոկրատայ քան զ.Գ. աթոռոց միայն կարգաբանութիւն եպիսկոպոսաց՝ Նրուսաղէմի և Հռովմայ [Ա], Անտիօքայ և Ալեքսանդրի. միթէ ընդ ամենայն աշխարհս չորս¹ միայն բաւէին եպիսկոպոսք, զն անդր, այլ զոր ի վեր քան զեպիսկոպոսքն էին պատմէ, և զայն զիտողաց [Թողու]² իմանալ. ուր ապա յետոյ ի բազմանալ քարոզութեանն՝ սուրբ Ժողովն Կոստանդնուպօլսի [Բ 135b] վասն խնայելոյ ի հեռաւորացն կարիս զչորեանն³ զլիաւոր աթոռս յ.Է. դարձեալ աճեցուցին աթոռս, զի մի [յանհասութենէն]⁴ զրկիցին և մի՛ դարձեալ արտաքոյ կարգելոցդ ինքնիշխանականօք խաղբակե[ս]ցին⁵ անկարգութեամբ:

Այս են հանգամանք .Բ. և .Գ. եպիսկոպոսաց այլոցն⁶ համաձայնութեամբ և ընծայական թղթով⁷ մայրաքաղաքացւոյն ձեռնադրել պատրիարք և ոչ լոկ եպիսկոպոս:

Ուսիր, ոչ որպէս քեզ թուիս հայրապետն վասն Աւան քաղաքին կամ արքայական զրան եպիսկոպոս գոյով այբանօք միայն առաւելով զահաւիրցութեամբ⁸ ապա թէ ոչ պարտ էր ի տեսչանն⁹ սուրբ Լուսաւորչին զմիապետութիւնն ի վերայ Ալրիանոսի տեսանել, զի նա կարգեցաւ վերակացու արքայական զրան բանակին, որում և ըստ քեզ աւելորդ էր քան զԱլրիանոս այլում կարօտանալ եպիսկոպոսի, այսինքն Ռատագիսի¹⁰ կամ այլ ումբէ.¹¹ իսկ ապա Նրուսաղէմի և Ալեքսանդրի և Անտիօքայ[Յ] եպիսկոպոսքն յոյժ կրտսերագոյնք են, վասն ոչ զոր¹² ունել թաղաւոր ի ձեռն որոյ գահափառեալ բարձրանային քան զընկերսն:¹³

1. Բ չիք՝ կարգել անձամբ.

2. Բ տա. 5. Ա կարգել ե.՝ս.

4. Ա յաւելն

5. Բ չիք՝ եւ.

6. Ա հայրապէն

7. Ա քանզի՝ տիւ.

8. ԱԲ թուոցն.

9. Ա չորեք հարիւրն Բ զեքսորն.

10. Բ ձեռնադրեց.

* Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան Կրուսաղէմ . . .

— Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան Ալեքսանդրիայ մեծ . . . եւն. Տէս Կանոնք Առաքելոց . (2. 736—2 եր. 14):

4. Ա չոր. 2. ԱԲ թուով.

5. Ա զ.դ.մն. Բ զ.դ.ն.

4. ԱԲ յանհասութենէն = յանհաստութենէն ?.

5. ԱԲ խաղբակեցին = խաղբակեցին կամ խաղբակիցին, Բայական ոյս՝ անուշագիր մնացած՝ միջին ձեւը (եցին = եպին, իցին) բաւական յաճախ է երկաթագիր գրութեանց մէջ, տես մասնաւորապէս տառնորդ գարի ձեռագրութ. Թ. 102 Գէորգ. Յուցակի.

6. Ա այլոց.

7. Բ թխտով. 8. Բ գահիրցութեամբ.

9. Ա ի տեսչան.

10. Ա ռատակիսի.

11. ԱԲ այլումբ = այլում ումբ.

12. Ա վ՛ս ոք զոր. 13. Բ զնկերսն.

Ընդէն ոչ կամիս հասանել օրինական ա-
սացելոցն որ ի միանականութիւնն կրթել
միշտ հանդիսանայր: Երիցս¹ անգամ ի տարւո-
ջն յանդիման լինել օրինադրէ բոլոր իօրացելի
եղանել ի տեղին: զոր ընտրեսցէ Տէր և զայն՝
ոչ դատարկաձեռն: այլ զիտեմ զի պարտաւի
առ ի քէն՝ ոչ դատարկաձեռնդ՝ յիշատակել
որ ասես՝ Ո՞վ կացոյց զիս կապալատէր կա-
թողիկոսի և զայն ոչ ածես զմտաւ: [Բ]
եթէ զբոլոր զձեռամբ անկեալքս քոյով ո՞վ² կա-
ցոյց քեզ պարտապան և անողորմապէս³ զան-
ձել տոկոսսխուռն զօշաքաղութեամբ: ո՞վ զե-
րազանցեալք քան զՊօղոս և ի յերրորդն ժա-
մանեալ յերկին⁴ և զեսն անճառականն
լուեալ: անվաւեր քեզ համարեալ Պօղոսի մե-
ծաջանութիւնն առ ի ժողովել զպատուին եր-
բեմն ի կողմանս Ասոր[ւ]ոց: փութալով ինքն
և Բառնարաս⁵ եղանել յերուսաղեմ առ ի
[Ա 211a] պաշտել զսուրբն: և երբեմն ի
կողմանս Աքայեցւոց և Թեսալոնիկեցւոց⁶
բազում նախանձայրդոր հնարիւք վաղվադել
ի պաշտօն սրբոցն: որ յերուսաղեմ:

Այլ զու Արամին աշակերտեալ անցուցեր
զնովաւ: զի նա թերեւ զպտուղ երախայրեացն
միայն արգելուլ բաջադէր: այլ զու բնաւին
զհայրապետականս բառնալ զաթոռն ձեռնարկե-
ցեր: զիսհհոգ [յ] ընծայարերութենէ ստացիս
կեանս: Բայց առ⁷ այժմս թողցուք՝ որ ինչ
[զ] պողարերութենէ իւրում ժամանակի և թէ
տացէ Տէր: ⁸

Բայց ապա թերեւ ստտանօր պատճա-
ռես⁹ քոյին հանապազատուտ պատճառաւա-
ղութեամբ: իրր թէ ի հնումն էր այն օրի-
նադրութիւն ի մի միայն ժողովել նախարկան
տեղի և քահանայութեան: յաղագս կարճե-
լոյ զբաղմտտուածութիւնն¹⁰ և ոչ այժմ: ուր
և Պօղոս ընդ ամենայն տեղիս ամբառնալով
զձեռս առանց երկմտութեան: բայց լուր՝
որպէս ի նախնումն ասէ յՕրէնան: ¹¹ Եթէ բան

ինչ դատաստանի վրիպեցի ի քէն՝ ելցես ի
տեղին զոր ընտրեսցէ Տէր: և յայանեսցես
այնոցիկ [Բ 136a]: որ ի տեղւոջն իցեն¹ զոր
ընտրեսցէ տէր: և զոր միանգամ ասիցեն քեզ
որ ի տեղւոջն իցեն քահանայ կամ [Գեառ-
ցի]² բան: և եթէ քք արասցէ իրս . . . [հը-
պար]տութեամբ³ սրտի առ ի յոչ հնազանդ
[լինելոյ]⁴ այնոցիկ որ ի տեղւոջն իցեն զոր
ընտրեսցէ [է Տէր]⁵ սատակեցի անձն⁶ այն
յիօրացելէ և բարձէք զարն ի միջոյ ձերմէ:
և այլոցն տեսեալ երկիցեն: ⁷

Բայց ոչ յայնժամ և եթէ այլ և առա-
քեալքն ըստ ամենայն ինչորոյ եղանին յերու-
սաղեմ և անդ կատարկին զընտրութիւն իրացն
առաջի Տեսառն: ⁸ Թէպէտ և զիտէին զաս-
տուած ամենայն⁹ ուրեք:

Եւ արդ միթէ ոչ յամենայն յամի
հրամայեցաւ ժողովել երիցս ի տարւոջն: այլ
ոչ ունիս ասել՝ ոչ յառաքելոցն ասացեալ
կամ զործեցեալ¹⁰ և ոչ զինի նոցա հարանցն
սրբոց: ընդ որս և մերն սուրբն Սահակ թէ-
պէտ և ոչ այլ իւրք: այլ ի պատճառս լու-
սաւորութեան իւղոյն հրաւիրէ զգալն առա-
ջի [հայրապետականին]¹¹ աթոռոյ և անըն-
դունելի տէ՛ զանցեալ տարւոյն զօժման [Ա]
իւղ: ¹² զի թերեւ այնու կարասցէ ձգել առ ի
միաբանութիւնն: բայց ոչ օտար է սոռոյդ ի-
մացողաց: զի որպէս յայնժամ ալդ մի և եթ
զողով ժողովուրդ Տեսառն: այսինքն իսրայէլ
և ի նոսայն¹³ օրինադրէր ժողովել յաս-
տուածարնակն տեղի և քահանայապետս:
Նմանապէս և առաքեալքն՝ ընդ որ անցանկին
ընդ քաղաքս և ընդ զեօղս՝ աւանդէին նոցա
պահել զհրամանս պատուիրեալս յառաքելոցն
և յիրիցանցն¹⁴ որ յերուսաղեմ: և այն զի

1. Բ Իջն

2. Երկու օրինակն էլ պակասներով: որ լրացնում
ենք մտաւորապէս: հետեւելով ու Ղրքին:

3. Ա խոտութեամբ:

4. Ա Լինել:

5. Ա ընտրեաց տը. ած = տէր աստուած:

6. Ա անձն այնձն:

7. Երկ. 0ր. ԺԲ. 20. 8. Գործ. ԺԵ. 2.

9. Ա Բ յամենայն:

10. Ա զործեցեալ կամ ասացեալ:

11. Ա Յրկնին Բ Յայրաւնին = հայրապետին:

12. Տես Կանոնք Ս. Սահակայ. գլ. Ի. (2. եր. 128):

նաեւ Սաի. Հայկ. Բ. եր. 92:

13. Ան ի Նցայն:

14. Ա յերեցանց:

1. ԱԲ. գ. 2. Ա քոյով. Բ քոով

5. ԱԲ անողորմ. ա. 4. Ա կորնթ. երկ. ԺԲ. 2.

5. Ա Գործ. ԺԱ. 29 եւլն:

6. Ա Փիլիպ. Գ. 16. 7. Ա չիք՝ առ:

8. Ա տէք տացէ:

9. Ա Բ պատճառէս:

10. Ա զաւազմութիւն:

11. Երկ. 0ր. ԺԷ. 8-13:

Պօղոս որ բաւական էր կշտամբել զգլուխն [առաքելոց] ¹ և զայլսն ևս ² [Բ] համայն ոչ արհամարհեալ խրոխտայր զմիարանութիւն պատուոյ անդրանիկ տեղւոյն ցորքան մերձակայութեամբ վարէր՝ տարածումն քարոզէր։ Իսկ ի ընդ չորեքեղբերան աշխարհի աւետարանաւն թէպէտ ներեցին զհարկն Երուսաղէմի, այլ ամենայն ազգաց առ մերձակայսն և հաւանելիսն ոչ թողացուցին քակել ի միաբանականէն ³ պատուոյ։

Եւ փոխանակ սրբոյ քաղաքին յիւրաքանչիւր ի պատշաճն վայրի գաղափարեցին զտիպսն Երուսաղէմի, ըստ ամենայն մասանց աշխարհաց և յանձնիրոցն զիսաւորագունիցն տեղեաց և վերակացուաց անձողայրելի սահմանեցին ընդ զպայման հարկին։ Ուր և մեծն Ղեոնդիոս առ սուրբն Դրիգոր կարեւոր քան զբնաւսն խրատականս նորահաւատիցն զանգն - երթեկելութեան ամբողջ պահել զհաստատութիւն պայմանաւորէ։ Եւ ամենայն ազգ հաւատացելոց ի Քրիստոս անհնարին քան զամենայն ինչ զայս վարկանին՝ իւրաքանչիւր առաջնորդաց հատուցանել պաշտօն, այլ դուքանդի համապատիւ զքեզ կարգաս հասարակացն հօր ⁴...

Ոչ զիտեմ ուստի այսոքիկ ընձիւղեցան մահածին բողբոջք ըստ օրինակի Վաղենախանոսացն, որ լի յաւիտեանս ի վեր քան զարարիչն ասեն, և զարարիչն անտեղեակ ասեն այնմ ⁵ յաւիտեանց, և զինքեանս յարարչէն ասեն եղեալս բայց զիտութեամբ զինքեանս աւելի քան զարարիչն ասեն ճանաչել զ լի յաւիտեանսն զի արարիչն ասեն, [Ա 211a] շնչական է, վասն այնորիկ ոչ զիտէ, իսկ մեք ամենեքեանս քանդի ունիմ [ք] սերմ [Բ 136b] յԱքամութայ, վասն այնորիկ հոգեւորք եմք և զիտունք քան զարարիչն ⁶ մեր։ * ըստ որոց և քոյդ նմանին արկուածք։

Բայց աղէ ⁷ սասա թէ այսօր կենդանի էր սուրբ Լուսաւորիչն՝ ասէ՛ր զքեզ հաւասար նմա և բնաւ ոչինչ ունել նմա

աւելի։ Եւ եթէ ասես, եթէ Ոչ ևս դու նման նմա, ապա և ոչ դու սրբոյն Ալփիանոսի։

Բայց որ երես միայն կարգս ¹ ասես յեկեղեցւոյ և այլ ոչ ևս, սւստի՞ տուաւ քեզ այդպիսի զիտութիւն. զիտեմ զի զԴիոնէսիոս պատճառես, բայց զինչ ասէ, ոչ ապաքէն ինն մականուանութեամբ զատուցանէ զնոսա և ըստ իւրաքանչիւր անուանցն էութիւնս և զօրութիւնս և ներգործութիւնս ասէ ունել, և զմերս քահանայութիւն նմանատիպս զոչ նոցայն ² ասէ զարդուց կատարողականս սրբազնագործութիւն երկնայնոցն քահանայապետութեանց զերազարդ նմանութեամբ արժանաւորեալս ³ և զասացեալսն աննիւթ քահանայապետութիւնս նիւթական ձեռք և կերպաւորականօք շարադրութեամբք զանաղանեալ աւանդեաց, և այլո՛ւր ասէ, Որ այժմն օրհնի ⁴ քահանայապետութիւն զմի և զնորն ունի զօրութիւն, և այլո՛ւր ասէ, Իսկ կատարեալ խորհրդածութիւն աստուածաբանութիւնն զմեր քահանայադիտութիւնս ասէ, կատարումն զսա կոչելով նմա և սրբազան յանկումն, և է երկնաւորին և օրինականին հասարակարար միջնորդութեամբ զձայրիցն բուռն հարկանելով, ուրեմն հազորդ լինելով իմանալեացն տեսութեանց, իսկ ուրեմն զի և նշանակօք զգալեօք զանաղանի, զի միջին է երկնաւորին և օրինականին մերս [Բ] քահանայութիւն։

Արդ՝ եթէ ոչ թուով աշտիճանացն իննակի որոշմամբք ունի նմանութիւն մերս կարգաւորութիւնս ⁵ իւր արդեօք զօրէ նմանիլ նոցայ, միթէ անմահութեամբ կամ զօրութեամբ կամ պարզութեամբ, և ոչ երբեք։ Կամ ընդէր բնաւ աշխատէր ճառել զթիւս նոցա և ի նոյն [Ա] յարել զմերս, որ անմահիցն անկարելի է առանց իննակի թուոց չափաւորեալ զշնորհս գերագունին և ապա ասանկի համարեալ մարդկայնոցս տուեալն պարգև, զիսոյդ հոգեղէնք ⁶ ի ձեռն սակաւուց միջնորդաց զօրեն ⁶ մերձաւորիլ մեղանշականք զօրով, ուր և լերինն Մովսէս միայն բաւականանայր հպիլ առ աստուած մտանելով ի յամպն։ * Եւ Յեսու թէ-

1. ԱՅ պակաս. 2. Ա. Գործ. ԺԵ. 41.

3. ԱՅ ի միաբանականէն ?.

4. Ինձ թուում է պակաս.

5. Բ այնմն. 6. Ա ք'նգի զարքն.

7. Ա ասէ. * երեւի եպիփանից.

1. Ա կարգս միայն.

2. կամ՝ նոցայոցն. 3. Ա արժանաւորեալք.

4. Բ ա'նի. 5. Ա - ս. 6. ԱՅ զօրէն.

* Ա. Եւթ. ԻԿ. 13. Թուոց ԺԱ. 24.

պէտ և առաւել քան զայլսն գտանիւր, այլ ոչ հաւասար Մովսիսի և Տերքն ի նոյն հոգւոյն¹ առեալ յայլում կացեալ խոնարհագոյն աշտիճանի, և Նլկադ [և Մովղադ²] հրաւիրեալք ի նոյն թիւ, [և տեսութեան աստուած]՝ ականի արժանացեալ շնորհի,³ բայց ի նոյն մատուցեալ տեղի, այլ քան զայլսն նոքա հպագոյն լինել ժողովրդեանն:

Եւ ահա յայտ եղև ինն որոշմունք չափուցն և կայենից. ⁴ Մովսէս, ⁵ Յեսու, ⁶ Տերքն, ⁷ ի բանակին մնացեալքն, ⁸ և ապա քահանայն մեծ և զինի [և] քահանայքն և ապա [է. Ը. Դ.] Ղևտացիքն յերիս որոշեալ պաշտամունս, որով ինն պարունակի թիւ դասու և կայենի:

Դարձեալ ըստ այլ օրինակի զատանին Ղևտացիքն ի յինն որոշմունս. նախ Մովսէս և Ահարոն ի տունն, զոր առանձինն զատուցեալ սրբէ հրամանն [Բ 137a] և ապա զունդըն Դեթսովնի [Զորէնի և Սեմի. Բ. դասք և կահաթու. Դ. լինին զունդք.⁶ Սահառ, Ամրամ, Բերրովն և Ողիէլ. և ապա Մերարեայ. Բ. դասք, Մոդդի* և Մուսի, որեն առանց ամենայն հակառակութեան ինն զունդք իւրաքանչիւր զատուցեալք:

Որ ի յետինս ի Տեառնէ ասացաւ՝ նրստեալ յաթոռն Մովսիսի դպիրք և փարիսեցիք⁷ և Տերք ժողովրդեանն և օրինականքն և ապա քահանայապետք և Ղևտացիք. Դ. ցեղք, Դեթսովն, կահաթ և Մերարի:

Սակ թագաւորականին բերէ զնոյն տիպս կարգեալ ի Մովսիսէ. նախ թագաւոր և ապա զատաւոր, զրեթէ հաւասար նմին, իշխանք և աշխարհահամարք,⁸ դպիրք որ ի բանակին [Ա 212a] օրինադրէին, և զօրավարք զօրացն և հազարապետք և հարիւրապետք, յիսնապետք, տասնապետք,⁹ որ են թուով ինն:

Սախ զառաքեալս ասէ Պօղոս, և որ ի

կարգին է: Եւ թէ ումեմն¹ ի հոգւոյն տուեալ է այլովքն զնոյն ինու թիւ, բայց ոչ ժամանակս բաւէ որ ինչ յաղագս իննակի զաղափարացն² իսկզբանէ ձևանան իրք և բանք: Որով ոչինչ է³ օտար և կարգք եկեղեցւոյ. ⁴ պատրիարքք, ⁵ արքեպիսկոպոսք, [է.] մետրապօլիտք, [Դ.] եպիսկոպոս, [է.] քորեպիսկոպոս, [Զ.] քահանայ, [Է.] սարկաւագ, [Ը.] կէս սարկաւագի, [Թ.] դպիրք, որով վարի եկեղեցի:⁴

Այլ զիտեմ, որ զձեռնադրութիւնս կարգացն որ ի Դիոնէսիոս կայ⁵ ընդդէմ բերես, բայց արդ ո՞ր գտանի յայն զիրս ժողովել եպիսկոպոսս և ձեռնադրել զայլ ոք եպիսկոպոս, վասն զի և այն [Բ] եթէ զգուշացի ոք՝ ըզնոյն միապետական յայտնէ [իրակերտութիւն].⁶ քանզի ասէ՝ Քահանայապետն ի կատարումն մատուցեալ. Բ. ոտիւք Տունը եղեալ առաջի աստուածայնոյն սեղանոյ, ի վերայ զիսոյն ունելով զաստուածաւանդն ասացեալս և զքահանայապետականն ձեռն. միթէ քահանայապետականն⁷ ասաց ձեռս⁸ իբր բաղմաց, եթէ ձեռն՝ որ զմիոյ նշանակէ. նմանապէս և ի քահանայապետականն կատարմունն զնոյն ասէ, ի վերայ զիսոյն ունելով զքահանայապետականն աջ, որ է միոյ նոյնպէս և սարկաւագաց:

Արդ՝ եթէ ոչ ինքնիշխան կարգաւ կատարեալ գտանի կատարողն ի վեր քան զքահանայապետս, թէպէտ և համանունակի ասի, այլ չէ ինչ փոյթ զրոյց վասն այդպիսեաց, որպէս յամենայն տեղիս գտանի եպիսկոպոս ասել և վերագունիցն քան զքահանայապետ. բայց որ Դ. միայն կոչմամբք բաւականաւ ասես եկեղեցւոյ, ոչ բնաւ յիրաւի: Թէպէտ և ասի ի կանոնս կղեմեայ՝ եպիսկոպոս, քահանայ և սարկաւագ,⁹ բայց տես, զի զհրամայողին¹⁰ տեղի

1. Բ ուրեմն. 2. Ա գղփցցն. 3. Ա չիք է:

4. Ա 1 պատրիարքք, 2 արք. եպիսկոպոս, 3 մետրապօլիտք, 4 եպիսկոպոս, 5 քորեպիսկոպոս, 6 քահանայ, 7 սկզբ, 8 կէս սարկաւագ, 9 դպիրք, որով վարի եկեղեցի:

5. Բ կա 6. Ա Թրաշկ' քառութիւն, տես իրակերտութիւն՝ բառը Հայկ. Բն.

7. Ա քնյալկ' ք. 8. Ա Թ ձեռն.

9. Տես կան. կղեմայ, եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ՝ եւ այլն (Զ. եր. 18—23):

10. Ա զհրմ' ղէն.

1. Բ հոգւոյ. 2. Բ պակաս՝ եւ Մովղադ

5. Բ պակաս՝ եւ տեսութեան աստուած.

4. Ա շնորհի արժանացեալ.

5. Ա ա. Բ-ի փոխանակ 1. 2. 3...

6. Ա դասք.

7. Ա Մատթ. ԻԳ. 2.

8. Ա ~անմըք Բ ~անամարք.

9. Ա Բ ուրք, ծաւաք, ժապետք.

* Ա Բ Մոդդի.

անմարմ է նուազել, զի ո՞վ է որ ասէ՞ն՝ լուծցի
և որոշեսցի, եթէ ոչ վեհագոյն քան զԳ.
ասացեալսն, որ են Գ.։ Եւ է ուրեք ի նոյն
[Ա] Կանոնս Կղիմեայ, զի ասէ. Եպիսկոպոս,
քահանայ և սարկաւազ կամ զրականագաց կամ
սաղմոսերգոյ՝ զտրեքշարաթի² և զուրբաթ և
զսուրբ քառասունն³ ոչ պահեսցէ. ⁴ և դար-
ձեալ՝ Որք եկեալ են ի վիճակ չեւ ամուսնա-
ցեալքն և կամիցին ամուսնանալ՝ հրամայեմք
զգրականագաց և զսաղմոսողս միայն⁵ :

Յսեւ Առաքելական Կանոնքն բնաւ ոչ յի-
շատակէ այլ ինչ, բայց երիցունս և սարկաւա-
զունս և կէս սարկաւագի [Բ 137b], այլ ոչ
եպիսկոպոս երբեք. ⁶ արդ՝ միթէ չե՞ պիտանա-
ցու եպիսկոպոս որով[հետեւ]⁷ առաքեալքն
ոչ յիշատակեն—քաւ լիցի, զի այս սովորու-
թիւն է գրոց, է ինչ որ պատմեն և է ինչ
որ ի միտս ընթերցողին տպաստան առնեն :

Բայց և Դիոնիսիոս, յոր դուն յու-
սացեալ ես, թերեւս յայլում վայրի ոչ շա-
տանայ երիւքդ ⁸ միայն, այլ աւելի քան
զեօթն ⁹ շարադասէ, յորում առ Դիմոփիլոս
գրէ մեղադրականս, որ էր կիսասարկաւազ : ¹⁰
Եւ արդ՝ դու, ասէ, բանիւ որ ըստ արժանա-
ւորութեան են որոշէ, այսինքն զնուաստագոյն-
սըն քան զքեզ, իսկ քեզ աստուածայինքն
պաշտօնեայք եղիցին խրատիչք, որ են սար-
կաւագունք, և նոյա քահանայքն և քահա-
նայիցն քահանայապետք և քահանայապետի-
ցըն առաքեալքն. ¹¹ և որ ի նոցանէ սխալեցէ՝
ի համակարգիցն կանոնեսցի, և ոչ գործցի
կարգ ի կարգի վերայ : Ահա ոչ դադարեաց յե-
րիսն և եթ, այլ ըստ ժամանակին ծառէ զպի-
տանացուն, ուստի ճանաչել արժան է, զի
յոյժ պիտանացու է իննպատիկ աշտիճանն ¹²
ի մէջ եկեղեցւոյ, ուր և առաքեալքն կարօ-
տացան ինն անգամ առնուլ հրաման և կո-
չումն և այն զի ի Զրիստոսէ, որ միովն բա-


ւական էր զբնաւն կատարել, բայց ոչ կամե-
ցաւ անցանել զկարգուն զոր տարոց էր եկե-
ղեցւոյ ² իւրում :

Զանգի նախ ընտրեաց զերկոտասանն և
եւ իշխանութիւն նոցա նշան[ս առնել և
եղ] ³ անուանս յառաջագոյն, որ է առաջին
աշտիճան. երկրորդ՝ ⁴ յորժամ առաքեաց
և եւ պատուէր և իշխանութիւն [Ա 212b]. ⁵
երրորդ՝ յորժամ ի [Բ] կողմանս Փիլիպ-
պեայ կեսարու տայ իշխանութիւն կապել և
արձակել. դարձեալ ի հարցանելն Պետրոսի՝
նստջիւք, ասէ, յերկոտասան ⁶ յաթոս. ⁷ և
ի վերնատանն սուրբ պատարագին տայ հրա-
ման. ⁸ և յետ յարութեանն փչէ ի նոստ ա-
սէ, առէք չոգի սուրբ, եթէ ումք թողուք
զմեղս թողեալ լիցի. և ի Դալիլեայ մկրտու-
թեան տայ հրաման. ⁹ և ի [հ] համբառնալն
չնորհէ աստիճան քահանայութեան. ¹⁰ և
զալստեամբ չոգւոյն ¹¹ սրբոյ զկատարեալն տայ
զպարզեարաշխական զօրութիւն : ¹²

Արդ՝ միթէ այսք ամենայն լուծիչք ե-
ղեն միմեանց ըստ քում ասացելոցդ : Սեւ
բազումք ի հայրապետաց Հայոց յեպիսկոպո-
սութեանէ կոչեցան, բայց ոչ են ըստ մեզ լու-
ծեալք, այլ առաւել աստուածատեսակեալք :
Այլ քեզ ըստ քոյդ եղիցի հաւատոց և մեզ
ըստ միւրց. և յամենայնի աստուած փառա-
ւորեսցի, այժմ և յաւիտեանս յաւիտենից
սիւնիս ¹³ և յամենայն ժամ :

Պ. Ե. Դ.

2 յուլիս 1897.



2. ԱՅ ԵԿԵՂԵՍՅՈՅՈՅ.

5. ԱՅ սղակաս. լրացնում եւք մատուորապէս :
Ա Մարի. Գ. 13.

4. Ա Ղուկ. Թ. 2. 5. Ա Մատթ. ԺԶ. 18.

6. ԱՅ քման.

7. Ա Ղուկ. 1Բ. 30. 8. Ա Յովհ. Ի. 22.

9. Ա Մատթ. ԻԲ. 19. 10. Ա Ղուկ. ԻԳ. 49.

11. Ա գոգւոյն.

12. Ա Գործ. Բ. 4.

13. ԱՅ սղակաս. ինչ համար անհասկանալի.

1. ԱՅ ասեն. 2. ԱՅ զղշք. 3. ԱՅ խան.

4. Կան. Կղ. 4Է. ԿԳ. 5. Կան. Կղ. 4Է. ԻԳ.

6. Կան. Առ. 4Է. 2.

7 = որովմտեւ. 8. Ա երբեք.

9. Ա զ էւն. Բ զ է.

10. Տէս Գիտն. Արիստ. - Առ. Գիտնիկոս սպասաւոր,
եւջն. 2աքս. Թարգ. Եր. 336-7.

11. Ա առջիք.

11. Ա աշտիճան.